

Թիւ 24280  
Փետր. 27, 1974

Արժանաշնորհ  
Տ. Գէորգ Բհնյ. Առաքելեան  
Հովիւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ  
Հայաստանեայց Եկեղեցւոյ  
Նախագահ Ժիական Խորհուրդի  
Պինկհամթըն, Ն.Յ.

Սիրելի Տէր Գէորգ,

Ստացած ենք Փետրուար 21, 1974 թուակիր 2եր տեղեկագիրը, որով  
կը հաղորդէք թէ 2եր նախագահութեամբ Յունուար 20ին գումարդւած հա-  
մայնքիդ ծխական ժողովին մէջ կատարուած է ծխական Խորհուրդի չորս  
անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը՝  
կը խնդրէք ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ 2եր ծխական ժողովը տեղի ունեցած է թեմա-  
կան Վանոնադրութեան տրամադրութեան համաձայն, այսու կը վաւերացնենք  
ծխական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Համեցէք փութով Առաջնորդարան դրկել Առաջնորդարանի ներփակեալ  
տեղեկագիրը, ծխական Խորհուրդի նորընտիր Գիւանի անդամոց եւ Եկեղեց-  
ւոյդ ենթակայ մարմիններու վարչութեանց ատենապետներու անունը, հաս-  
ցէն եւ հեռաձայնի թիւը:

Օրհնելով ծխական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք Ձեզի եւ Ձեր  
պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի  
պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր  
սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ

Տորթ. Նուպար Ասթարճեան  
Տորթ. Վահէ Կարապետեան  
Տորթ. Արիստակէս Խաչատուրեան  
Եղուարդ Սերայտարեան